ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Մեծ Բրիտանիա, քաղաք Լոնդոն, ապրիլի 8-ից 11-ը, 2025թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցացիա (ՇԿՀԱ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցացիայի Կառավարիչների խորհրդի (ԿԽ) և Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (ՌԿՆԿ) նիստերին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցացիան (ՇԿՀԱ) միավորում է աշխարհի բոլոր գործող ատոմային կայանները և ստեղծում է հարթակ՝ փորձի փոխանակման, գործընկերային գնահատումների, տեխնիկական աջակցության և շարունակական բարելավման համար: ՇԿՀԱ-ի գործունեությունը հիմնված է համագործակցության, թափանցիկության և վստահության սկզբունքների վրա՝ միավորելով միջուկային արդյունաբերության առաջատար փորձագետներին՝ ընդհանուր նպատակի՝ «մեկ աշխարհ, մեկ ստանդարտ» սկզբունքի ներքո: Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (ՌԿՆԿ) նիստի ընթացքում քննարկվել են կազմակերպության ռազմավարական զարգացմանը, կադրային քաղաքականությանը և կառավարման կառուցվածքի կատարելագործմանը վերաբերող հիմնարար հարցեր: Նիստի ընթացքում գնահատվել է ՇԿՀԱ-ի ռազմավարական ծրագրի իրականացումը, հաստատվել են կազմակերպության կայուն առաջնորդության ձևավորման մոտեցումները, ինչպես նաև ներկայացվել են առաջարկություններ տարածաշրջանային կենտրոնների և անդամ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

   Կառավարիչների խորհրդի (ԿԽ) նիստի ժամանակ ամփոփվել են ՇԿՀԱ-ի ընթացիկ գործունեության արդյունքները, ներկայացվել են տարածաշրջանային կենտրոնների հաշվետվությունները, ներառյալ՝ գործընկերային գնահատումների և տեխնիկական

փոխանակումների արդյունքները: Հատուկ ուշադրություն է դարձվել անվտանգության մակարդակի բարձրացմանը, թվային տեխնոլոգիաների ներդրմանը և ատոմային էլեկտրակայանների շահագործման կայունության ապահովմանը: Քննարկվել են կազմակերպության բյուջեն և առաջիկա ծրագրերը, այդ թվում՝ համաշխարհային միջոցառումները, վերապատրաստման նախաձեռնությունները և անվտանգության մշակույթի զարգացման ուղղությամբ իրականացվող քայլերը:
Նիստերի արդյունքներով հաստատվել են կազմակերպության ֆինանսական փաստաթղթերը, 2025թ-ի հիմնական միջոցառումների օրակարգը և հետագա գործունեության առաջնահերթությունները: ՇԿՀԱ-ի անդամները վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ համատեղ ջանքերով շարունակելու աշխատանքը անվտանգ, հուսալի և մասնագիտորեն գերազանց միջուկային արդյունաբերության ձևավորման ուղղությամբ:
Նիստերը կայացել են կառուցողական և արդյունավետ մթնոլորտում՝ վերահաստատելով ԱԷԿ օպերատորների գլոբալ գործընկերության զարգացման ՇԿՀԱ-ի առաքելության՝ ատոմային էլեկտրակայանների շահագործման ոլորտում անվտանգության, հուսալիության և մասնագիտական գերազանցության բարձրագույն մակարդակի հասնելու ընդհանուր նպատակի կարևորությունը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Առաջին օրը նիստը բացեց ՇԿՀԱ-ի նախագահ՝ Խոսե Գագոն, ով շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, ողջունեց նրանց ներկայությունը և ընդգծեց քննարկվող հարցերի կարևորությունը՝ հաշվի առնելով աշխարհում տիրող նոր մարտահրավերները և ՇԿՀԱ-ի դերը: Այնուհետև հաստատվեց նիստի օրակարգը: Նախագահը հիշեցրեց, որ քննարկման կենտրոնում կլինի արտահանման վերահսկողության և պատժամիջոցների հարցը, որն պահանջում է հարթ, համարժեք մոտեցում՝ պահպանելով միջազգային իրավական նորմերը, միաժամանակ ապահովելով կազմակերպության արդյունավետ աշխատանքը:
«Արտահանման վերահսկողություն և պատժամիջոցներ՝ լիցենզավորման մոտեցում» զեկույցով հանդես եկավ Ջեյդ Ջոնսը:
Զեկույցը տեղադրված էր Directors Desk պլատֆորմում՝ կոմիտեի անդամների նախնական ծանոթանալու նպատակով:
Զեկույցում շոշափվեց հետևյալ հիմնական ուղղությունները՝

- անհրաժեշտություն ապահովելու միասնական, թափանցիկ և ադապտիվ մոտեցում արտահանման լիցենզիաների մշակման և միջազգային ու ազգային կարգավորիչ մարմինների հետ համագործակցության հարցում,
- պատժամիջոցների գործող ռեժիմների վերլուծություն՝ հատուկ երկրների նկատմամբ, և դրանց ազդեցությունը ՇԿՀԱ-ի գործունեության վրա,
- արտահանման վերահսկողության կանոնների անտեսման ռիսկեր՝ ներառյալ իրավաբանական պատասխանատվությունը, վնասը և որոշակի ծրագրերի դադարեցումը,
- իրավաբանական մոտեցումների օրինակներ՝ նմանատիպ միջազգային կազմակերպություններում և գործընկերային կառույցներում:

Քննարկման ընթացքում ներկայացվեցին գործողությունների հնարավոր սցենարներ՝ իրավաբանական և քաղաքական սահմանափակումների

պայմաններում: Մասնակիցները նշեցին, որ, չնայած ընդհանուր նպատակներին, լիցենզավորման մոտեցումը պետք է լինի ճկուն և հաշվի առնի հետևյալը՝ տարածաշրջանային տարբերությունները կարգավորման հարցում,երկրների քաղաքական և տնտեսական առանձնահատկությունները,որոշումների կայացման մեջ թափանցիկության և հաշվետվողականության պահպանումը:

Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի նիստում լսվեցին նաև՝

- ՇԿՀԱ-ի 2025–2030 թթ. ռազմավարական ծրագրի վերանայումը,
- Ատոմային էներգետիկայի ոլորտում առկա գլոբալ մարտահրավերները և դրանց արձագանքման հնարավոր մոտեցումները,
- ՇԿՀԱ-ի կառավարման բարելավման, թափանցիկության բարձրացման և անդամ կազմակերպությունների հետ համագործակցության խորացման ուղիները:

Լոնդոնի գրասենյակի իրավաբանների խումբը մեկնաբանեց փաստաթղթի դրույթները, ուշադրություն հրավիրեց որոշ իրավաբանական նրբությունների վրա և պատասխանեց կոմիտեի անդամների հարցերին՝ ներկայացնելով հնարավոր մեկնաբանությունները՝ հատուկ իրավաբանական տարածքների շրջանակներում:

Քննարկման արդյունքում ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները՝

- մշակել ներքին ընթացակարգեր ռիսկերի վերանայման համար՝ մինչև լիցենզավորման որոշումների կայացումը,
- սահմանել պատասխանատու անձանց դերը՝ իրավական պահանջների պահպանման հարցում,
- ապահովել ռազմավարության մշտական թարմացում՝ միջազգային իրավաբանական կարգի փոփոխությունների դեպքում,
- պահպանել մշտական մոնիտորինգ միջազգային պատժամիջոցների ռեժիմների նկատմամբ և համապատասխանորեն թարմացնել լիցենզավորման ռազմավարությունը:

Կոմիտեի անդամները շահագրգռված են մշակել արդյունավետ և իրավաբանականորեն ճիշտ մոտեցում արտահանման վերահսկողության հարցում: Չնայած իրավաբանական և քաղաքական փոփոխվող պայմաններին՝ միավորված ռազմավարության մշակումը ժամանակին և անհրաժեշտ քայլ է:

Ջեֆֆ Բաունը ներկայացրեց «Նոր բլոկներ և նոր անդամների ռազմավարություն» թեմայով զեկույցը:

Այս հաշվետվությունում դիտարկվում են ատոմային էլեկտրակայանների (ԱԷԿ) նոր բլոկների հետ կապված հիմնական ռիսկերը, ինչպես նաև Ատոմային էլեկտրակայանների օպերատորների շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի (ՇԿՀԱ) ռազմավարությունները դրանց նվազեցման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում նոր անդամների, սկսնակ օպերատորների խնդիրներին և գլոբալ մարտահրավերներին, որոնք ազդում են արդյունաբերության նպատակների իրականացման վրա մինչև 2030 թվականը:

Նպատակներ և վարկանիշներ

- 2023-2024 թթ. շահագործման են հանձնվել 5 բլոկներ Քարաչի, Չաշմայի և Շիդվո-Բեյի ԱԷԿ-ներում
- 2025-2026 թթ. նախատեսվում է 7 բլոկների (Ռաջաստան 7-8, Քաքրալար 3-4, Ֆլամանվիլ 3) շահագործման հանձնում
- 2030 թ. ակնկալվում է 15 բլոկների շահագործման սկիզբ

Նշանակալի դեպքեր

- Իրադարձություններ Հայան 1, Նինգդե 3 և Տայշան 1 բլոկներում:
- Պատահարներ HPC-ում, Կուրսկի ԱԷԿ-ում (բլոկ 2) և Լենինգրադի ԱԷԿ-2-ում (բլոկ 2)

Արդյունավետության ցածր ցուցանիշներ

- ՇԿՀԱ-ի ցուցանիշը <80% հետևյալ բլոկներում.
- Քաքրալար 3, Քարաչի 2-3, Բելառուսական 1-2, Լենինգրադի ԱԷԿ-2 (բլոկ 2), Օլկիլուոտո 3:

Ռազմավարական մոտեցումներ

- Ստեղծվել է նոր բլոկների աշխատանքային խումբ (ԱԽ) բոլոր տարածաշրջանային կենտրոնների (ՏԿ) և գլխավոր գրասենյակի (ԳԳ) մասնակցությամբ:
- Բարելավվել է աշխատանքների պլանավորումը հաջորդ 5 տարիների համար:
- Մասնագիտական հմտությունների զարգացում նոր բլոկներին աջակցելու համար:

Սկսնակ կազմակերպությունների ներգրավում

- Սկսնակ երկրների մտադրությունների մոնիտորինգ ատոմային էներգետիկայի զարգացման վերաբերյալ
- ՇԿՀԱ-ին անդամակցելու պահանջներ.
- INIR (ատոմային ենթակառուցվածքի համապարփակ վերանայման) իրականացում
- Ռեակտորի տեխնոլոգիայի ընտրություն
- Մասնակցություն մրցույթներին և կառավարական բանակցություններին

ԱԷԿ-ների նոր բլոկների հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար ՇԿՀԱ-ին անհրաժեշտ է ուժեղացնել ռազմավարական պլանավորումը, բարելավել տարածաշրջանների միջև համակարգումը և ավելի ակտիվորեն ներգրավել սկսնակ կազմակերպություններին: Առաջարկված միջոցների իրականացումը կբարձրացնի նոր բլոկների աշխատանքի արդյունավետությունը և կօգնի հասնել արդյունաբերության նպատակներին մինչև 2030 թվականը:

Այս ոլորտի գլխավոր նպատակը՝ կազմակերպության գործունեության ընդլայնումը նոր արդյունաբերական հատվածների միջոցով և նոր գործընկերների ներգրավումն է: Դա կապված է ֆոկուսային ոլորտ 3-ի շրջանակում մշակված ռազմավարության հետ, որտեղ առաջնահերթ են՝ նոր բլոկների ստեղծումն ու նոր խմբերի մասնակցությունը: Այս ռազմավարությունը նախատեսված է խթանել ստեղծագործական համագործակցություն, նոր ներդրումային ուղիներ և տեխնոլոգիական նորարարություններ, որոնք կօգեն ՇԿՀԱ-ի շուկային բավարարել ընթացիկ պահանջներին ու ապագայի զարգացումներին:

Նոր բլոկները նախատեսված են զարգացնելու տեխնոլոգիական ֆինանսական նորարարություններ, ինչպես նաև գործարար ռեզոնանսներ՝ սահմանելու նոր շուկա:

Ռազմավարության հիմնական նպատակներն են՝

- նոր արդյունաբերական հատվածների բացահայտում և զարգացում՝ որոնք կարող են հնարավորություն տալ տարածել ծառայությունները և խթանել նոր բիզնես մոդելներ,

- նոր գործընկերությունների և ամերիկական, եվրոպական և միջազգային շուկայի ուժեղ կառույցների ներգրավում, որը պարտադիր է՝ ստուգված գործընկերների հետ համագործակցության հիման վրա:

Նոր բլոկների ու նոր անդամների ռազմավարությունը նախատեսված է, որ կայացնի նոր շուկաների դիմաց ուժեղ, ճկուն և ժամանակակից համակարգ՝ ապահովելու կազմակերպության շարունակական զարգացումը:

Կարևոր է, որ ստացված տվյալների և նախնական փորձարկումների հիման վրա շարունակվեն փորձառությունն ու տեսողական գնահատումները, որոնք կհանգեցնեն ռազմավարության մշտական բարելավմանը:

Թոմաս Նիստրոմը ներկայացրեց կիբերպաշտպանության ոլորտում իրականացվող ուղղիչ միջոցառումների մասին զեկույցը: Նպատակն է ներկայացնել կիբերպաշտպանության ոլորտում իրականացվող ուղղիչ միջոցառումները, դրանց գործողության ընթացքը, հնարավոր խնդիրները և սպասելի արդյունքները:

Ձեռնարկվող հիմնական քայլերն ու միջոցառումներն են՝

Կարգավորումների միջոցով պահպանել համակարգերի անխափան աշխատանքը՝ որևէ ներխուժում կամ տեխնոլոգիական սպառնալիքների դեպքում:

Մոնիտորինգի համակարգերի թարմացում, որոնք թույլ կտա վերահսկել համակարգերի վիճակը 24/7 ռեժիմով:

Բլոկային թարմացումներն ու ներգրավված համակարգերը նախատեսված են տեղեկատվական համակարգերի պաշտպանությունը բարձրացնելու համար: Ավելացված են օժանդակ ծրագրեր, որոնք թույլ են տալիս քննարկել և կանխորոշել ներխուժման վտանգը և արագ արձագանքել հնարավոր սպառնալիքներին: Ավելացված են նաև նորացված անվտանգություն ապահովող լոգերներ և գործիքներ, որոնք ակտիվացնում են պաշտպանության համակարգերը, ապահովելով պաշտպանություն տարբեր հոսքերից:

Կիբերպաշտպանության ուղղիչ միջոցառումների մշակումը համարվում է կարևոր քայլ, որը ապահովում է հաստատության տեղեկատվական, տեխնոլոգիական և կազմակերպչական անվտանգությունը:

Նոր համակարգերի ինտեգրումը, օժանդակ գործիքները և աշխատակազմի վերապատրաստումը կարևոր են, որպեսզի գործառույթները համապատասխան լինեն ժամանակակից մարտահրավերներին:

Ջեյջդ Ջոնսը ներկայացրեց անդամության կառուցվածքի վերաբերյալ մասնագիտական զեկույցները, ով համակարգում է կազմակերպության անդամակցության քաղաքականության վերանայման ու զարգացման գործընթացները: Նա ակտիվորեն ներգրավված է ՇԿՀԱ-ի գլոբալ ռազմավարության իրականացման, նոր տարածաշրջանային կենտրոնների ձևավորման և անդամ կազմակերպությունների փոխգործակցության ամրապնդման գործում:

ՇԿՀԱ-ի Քաղաքականություն №5 «Անդամակցություն» փաստաթղթի վերանայման գործընթաց է սկսվել՝ անդամակցության կառուցվածքն ավելի ճկուն ու միջազգային դարձնելու նպատակով: Տարածաշրջանային կենտրոնները քննարկեցին առաջարկները անդամ կազմակերպությունների հետ: Վերանայված տարբերակները կքննարկվեն նաև ՌԿՆԿ և Կառավարման խորհրդի նիստում՝ հուլիսին:

Շանհայում նախատեսվում է ստեղծել նոր տարածաշրջանային կենտրոն, որը կտրամադրի ՇԿՀԱ-ի ծառայությունները՝ մյուս կենտրոնների չափանիշներին համապատասխան:

Կատարվող քայլերն են.

- Շանհայի կենտրոնի իրավաբանական գրանցում

- Միջազգային դիմորդների ներգրավում
- ՇԿՀԱ-ի կողմից անկախ գնահատում՝ կենտրոնի միջազգայինության և անկախության հաստատման համար
- Անդամների ու կենտրոնների մասնակցությամբ անցման պլանի մշակում:

Չինաստանում մի քանի նոր ԱԷԿ-ներ (9 շահագործող կազմակերպություն) պատրաստվում են միանալ ՇԿՀԱ-ին, սակայն դեռևս չունեն անդամակցության կարգավիճակ: Դրանք պատկանում են չորս խոշոր չինական ընկերություններին, որոնք արդեն ՇԿՀԱ անդամներ են:Ըստ կանոնների՝ այդ նոր ԱԷԿ-ները պետք է անդամակցեն ՇԿՀԱ-ին՝ ծառայություններից օգտվելու համար:Քանի դեռ Շանհայում չկա տարածաշրջանային կենտրոն, առաջարկվում է ժամանակավորապես այդ ԱԷԿ-ները կցել իրենց մայր ընկերության կցված կենտրոնին (օրինակ՝ CNNC-ը՝ Տոկիոյի կենտրոնում)՝ հատուկ համաձայնագրի հիման վրա:

Անդամակցության կառուցվածքի փոփոխությունն ու Շանհայի կենտրոնի զարգացումը միտված են ՇԿՀԱ-ի միջազգային բնույթի ուժեղացմանը: Անհրաժեշտ է անդամների, կենտրոնների ու Լոնդոնի գրասենյակի համատեղ աշխատանք՝ այս անցումային փուլն արդյունավետ կազմակերպելու համար:

Հաջորդ օրը նիստը շարունակեց ՇԿՀԱ-ի նախագահ Խոսե Գագոն: Տեղի ունեցավ քվորումի հաստատում՝ առնվազն երկու անդամ անձամբ կամ վստահության հիման վրա, և ոչ ավելի քան չորս անձ՝ ըստ վստահության: Նիստի մյուս հատվածում մասնակցում էին միայն Գործադիր ղեկավարների խումբը (ԳՂԽ), հրավիրված հյուրերը և թարգմանիչները: Մասնակիցներին հիշեցրեցին, որ ամեն ինչ պետք է մնա գաղտնի: Նաոկի Չիգուսան (ՇԿՀԱ-ի գործադիր տնօրեն) հանդես եկավ «ՇԿՀԱ-ի ոլորտային գործունեություն» թեմայով զեկույցով: Անդրադարձ կատարեց «Ոլորտային գործունեության» 2030 թվականի նպատակների իրականացման ընթացքին, ներկայացնելով դրական փոփոխությունները և ձեռքբերումները տարբեր ուղղություններով: Նա նշեց կայանների վարկանիշների վերաբերյալ վերջին թարմացումները՝ ներկայացնելով, թե որքան կայաններ ունեն 3-րդ կարգի վարկանիշ և երբ են նախատեսվում հաջորդ պլանային պարբերականները: Անդրադարձ կատարվեց նաև վերականգնման պլանների մշակմանը և դրանց իրականացման ընթացքին, ինչպես նաև ոլորտի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցներին: Միաժամանակ, Չիգուսան խոսեց բացահայտված խնդիրների լուծման և նոր ռիսկերի կառավարումն ապահովելու համար իրականացվող քայլերի մասին, ինչպես նաև արդյունքների բարելավման համար շարունակվող գործիքների ու ծրագրերի կարևորության մասին:

Զեկույցներ ներկայացրեցին նաև այլ տարածաշրջանային կենտրոնների տնօրեններն ու ղեկավարները:

Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցացիայի Մոսկովյան կենտրոնի տնօրեն Վասիլի Ակսյոնովը և ես՝ որպես Մոսկովյան կենտրոնի կառավարիչների խորհրդի նախագահ և «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, հանդես եկանք զեկույցով:

Ես ներկայացրեցի Հայկական ԱԷԿ-ի դիրքորոշումը ՇԿՀԱ-ի անդամների լիցենզավորման նախաձեռնության վերաբերյալ:

ՇԿՀԱ-ի Լոնդոնի գրասենյակի կողմից անդամների լիցենզավորման առաջարկը՝ արտահանման վերահսկողության և պատժամիջոցային սահմանափակումների ներքո, առաջացրել է լուրջ մտահոգություն և անորոշություն՝ մասնավորապես Հայկական ԱԷԿ-ում: Նման մոտեցումը վտանգում է ՇԿՀԱ-ի հիմնարար

առաքելությունը՝ ատոմային էլեկտրակայանների շահագործման անվտանգության խթանումը ամբողջ աշխարհում: Այս նախաձեռնության կիրառումը կարող է խաթարել ՇԿՀԱ-ի գործունեությունը՝ սահմանափակելով կարևորագույն տեղեկատվության փոխանակումը անդամների միջև: ՇԿՀԱ-ի անդամներն իրենց գործունեության շրջանակում մշտապես տարածում են արժեքավոր տեղեկատվություն՝ կապված շահագործման ժամանակ արձանագրված միջադեպերի, անվտանգության բացերի, գործընկերային գնահատումների և դրական փորձի հետ: Լիցենզավորման գործընթացը, ենթակա լինելով Մեծ Բրիտանիայի կառավարության վերահսկողությանը, կխաթարի այս բաց հաղորդակցման մոդելը, վտանգելով ամբողջ համակարգի արդյունավետությունը:

Հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ նման մոտեցման պարագայում ՇԿՀԱ-ի որոշ տարածաշրջանային կենտրոններ, այդ թվում՝ Մոսկվայի և Շանհայի կենտրոնները, կարող են հայտնվել մեկուսացման պայմաններում: Այս կենտրոնների անդամների՝ մասնավորապես Ռուսաստանի և Չինաստանի ատոմային ընկերությունների փորձը և տեխնոլոգիական առաջընթացը անփոխարինելի արժեք են ներկայացնում ՇԿՀԱ-ի ընդհանուր գործունեության համար:

Ես հատուկ անդրադարձ կատարեցի այն հանգամանքին, որ այս նախաձեռնությունը Հայկական ԱԷԿ-ը կարող է կանգնել է փակուղու առաջ՝

- Մնալ Մոսկվայի կենտրոնում՝ առանց լիցենզիայի, նշանակում է կորցնել տեղեկատվական հոսքեր Լոնդոնի գրասենյակից:
- Մինչդեռ լիցենզավորման հայտ ներկայացնելը՝ կենտրոն փոխելու պայմանով, նշանակում է հեռացում Մոսկվայի կենտրոնից և կարևոր տեղեկատվության կորստի վտանգ :

  Արձանագրելով առկա մարտահրավերները՝ զեկույցում հնչեցրեցի նաև առաջարկ՝ դիմել ՇԿՀԱ-ի Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեին՝ խնդրելով քննարկել հնարավոր այլընտրանքային մոտեցումներ, մասնավորապես՝

  1) Լիցենզավորման փուլային մեխանիզմի ներդրում
  2) Լիցենզավորման մոտեցման վերանայում՝ Կոմիտեի առաջարկների հիման վրա
  3) Արտահանման վերահսկողության/պատժամիջոցների լիցենզավորման գործընթացից հրաժարում և նախկին ձևաչափով համագործակցության շարունակություն

Այս տեսակետը խարսխված է ՇԿՀԱ-ի հիմնարար սկզբունքի վրա՝ քաղաքականությունից զերծ լինելը: Քանի դեռ անվտանգության բարձրացումը մնում է կազմակերպության միակ նպատակն ու առաքելությունը, հարկ է զերծ մնալ նախաձեռնություններից, որոնք կարող են խաթարել գլոբալ համագործակցությունն այս բացառիկ կարևոր ոլորտում:

2024–2025 թվականների ընթացքում ՇԿՀԱ Մոսկվայի կենտրոնը շարունակում է իր ակտիվ աշխատանքը՝ ուղղված միջուկային անվտանգության, հուսալիության և շահագործման մշակույթի մակարդակի բարձրացմանը: Գլխավոր ուշադրության կենտրոնում էին խնդիրներ ունեցող ԱԷԿ-ների աջակցությունը, բարելավված մոնիտորինգի համակարգի (ԲՄՀ) ներդրումը, առաջնորդության զարգացումը, անձնակազմի ուսուցումն ու նոր էներգաբլոկների շահագործմանն աջակցությունը:

2025 թ. ապրիլի դրությամբ արձանագրվել են հետևյալ արդյունքները.

- Երեք ԱԷԿ (Հայկական, Կուրսկի, Կուդանկուլամի) ստացել են ոլորտային “3” գնահատական, ինչը պահանջում է լրացուցիչ աջակցություն:

- Տարածաշրջանի 48 բլոկից 10-ը (21%) հասել են ՇԿՀԱ-ի արդյունավետության ինդեքսի՝ 80-ից բարձր մակարդակի:
- Կատարվել է 345 շահագործման դեպքերի ուսումնասիրություն (WER)
- SOER առաջարկությունների կատարումն անցել է 89,9%-ը:

ՇԿՀԱ Մոսկովյան կենտրոնը նպատակային աջակցություն է ցուցաբերել չորս ԱԷԿ-ների՝ Հայկական, Կուդանկուլամ, Լենինգրադ և Նովովորոնեժ:

Իրականացվել է 5 ուսումնական դասընթաց Ռուսաստանում, Բելառուսում և Հնդկաստանում՝ անվտանգային մշակույթի և առաջնորդության թեմաներով:

Կազմակերպվել է 2 տեսակոնֆերանս՝ նվիրված սարքավորումների հուսալիությանը:

2024 թ. սեպտեմբերին Հայաստանում անցկացվել է տեխնիկական տնօրենների համաժողով:

2025 թվականին նախատեսվում է՝

- Ցածր արդյունավետություն ունեցող ԱԷԿ-ների աջակցման անհրաժեշտություն
- Սարքավորումների հուսալիության և ծերացման կառավարում
- Որակյալ կադրերի պակաս
- Մատակարարման խնդիրներ՝ հատկապես Բանգլադեշում՝ աշխարհաքաղաքական և տնտեսական գործոններով պայմանավորված:

«Ընթացք դեպի կատարելություն»-ը ՇԿՀԱ-ի ռազմավարական նախաձեռնությունն է, որի հիմնական նպատակն է՝ ապահովել, որ բոլոր անդամ ԱԷԿ-ները մինչև 2030 թվականը հասնեն շահագործման արդյունավետության և անվտանգության այն մակարդակին, որը համապատասխանում է ոլորտի առաջատարների չափանիշներին:

Հիմնական ուղղություններն են՝

<u>Ստանդարտների բարձրացում</u>-ԱԷԿ-ները պարտավոր են համապատասխանել միջազգային լավագույն փորձին և անվտանգության առաջատար չափանիշներին:

<u>Բարելավված մոնիթորինգի համակարգի (ԲՄՀ) ներդրում</u>-Բոլոր կայանները պետք է ներդնեն բարելավված մոնիթորինգի համակարգ, որը թույլ է տալիս արդյունավետ վերահսկել գործարկման գործընթացները, նույնականացնել խնդիրները և կիրառել շտկող միջոցառումներ:

<u>Աջակցություն թույլ ԱԷԿ-ներին</u>-Տարածաշրջանային կենտրոնները և փորձագիտական խմբերը ուղղակի աջակցություն են ցուցաբերում այն ԱԷԿ-ներին, որոնք ունեն ցածր գնահատականներ՝ կազմակերպելով համատեղ դիտարկումներ, մասնագիտական այցեր և վերապատրաստումներ:

<u>Կանոնավոր հաշվետվություն և ցուցանիշների զարգացում (KPI)</u> -Ներդրվում են ցուցանիշներ շահագործման, անվտանգության, անձնակազմի պատրաստվածության և այլ ոլորտներում՝ կատարողականի հստակ չափման և վերահսկման համար:

<u>Լավագույն փորձի փոխանակում</u>-Կազմակերպվում են համաժողովներ, աշխատաժողովներ, տեխնիկական սեմինարներ և փոխայցելություններ՝ ապահովելու փորձի փոխանցում հաջողությամբ գործող կայաններից մյուսներին:

<u>Հարմարվողականություն նոր մարտահրավերներին</u>-Նախաձեռնությունը ներառում է արձագանքման միջոցառումներ՝ կիբերանվտանգության, մատակարարման շղթաների խափանումների, կլիմայական փոփոխությունների և այլ արդի մարտահրավերների նկատմամբ:

«Ընթացք դեպի կատարելություն» նախաձեռնությունը ոչ թե միանգամյա նախագիծ է, այլ շարունակական գործընթաց, որի միջոցով ՇԿՀԱ-ի անդամները միավորելով

ջանքերը՝ ձգտում են հասնել գերազանցության՝ անվտանգության, հուսալիության և պատասխանատու շահագործման ոլորտներում:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայկական ատոմային էլեկտրակայանն ունի հարուստ փորձ՝ տարածաշրջանային ենթակառուցվածքային և աշխարհաքաղաքական մարտահրավերների պայմաններում աշխատելու հարցում, ինչը նրան դարձնում է արժեքավոր գործընկեր ՇԿՀԱ-ում: Այս մասնակցությունն իր հերթին հնարավորություն է տալիս հայկական փորձը համընթաց կիսել միջազգային մասնագետների հետ՝ նպաստելով ոչ միայն ընդհանուր ոլորտային զարգացմանը, այլև ռազմավարական և կառավարման մակարդակներում կայուն առաջընթացին:

ՀԱԷԿ-ը կարևոր դեր է խաղում ատոմային էներգետիկայի բարելավման գործում: Իր գործունեությամբ կայանը հանդես է գալիս որպես ակտիվ անդամ՝ Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի (ՇԿՀԱ) շրջանակում, նպաստելով փորձի փոխանակմանը, տեխնոլոգիական նորարարություններին և շահագործման այնպիսի մոդելի ձևավորմանը, որը համապատասխանում է անվտանգության և արդյունավետության միջազգային չափանիշներին:

Կայանի շահագործման գործընթացները մշտապես կատարելագործվում են՝ ներդնելով նորարարական տեխնոլոգիաներ, ժամանակակից մոնիթորինգի համակարգեր և ինքնագնահատման մեխանիզմներ: Այս մոտեցումները բարձրացնում են կայանի անվտանգության և հուսալիության մակարդակները՝ ամրապնդելով համագործակցությունը աշխարհի առաջատար ատոմային կայանների հետ:

ՇԿՀԱ-ի՝ ՀԱԷԿ-ի գործունեության կատարելագործմանն ուղղված հիմնական նպատակներն են՝

- Բարձրացնել անվտանգության և արդյունավետության ընդհանուր ցուցանիշները՝ միջազգային ստանդարտներին համապատասխան,
- Կիսվել գիտելիքներով, փորձով և հաջողված լուծումներով՝ նպաստելով ընդհանուր շահագործման պրակտիկայի ամրապնդմանը,
- Քաջալերել նորարարական լուծումների և տեխնոլոգիական առաջընթացի կիրառումը՝ ի նպաստ միջուկային էներգետիկայի էկոլոգիական կայունության և տնտեսական զարգացման:

Բացի էլեկտրաէներգիայի արտադրական հիմնական գործառույթից, ՀԱԷԿ-ը հանդիսանում է ռազմավարական գործընկեր ՇԿՀԱ-ի շրջանակում՝ դառնալով հարթակ փորձի և տեխնոլոգիական նորարարությունների միջազգային փոխանակման համար: Սա խթանում է միջուկային էներգետիկայի անվտանգության, արդյունավետության և գլոբալ գործընկերության ամրապնդումը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նիստերի ընթացքում քննարկվել են կազմակերպության ռազմավարական զարգացման, կադրային քաղաքականության և կառավարման կառուցվածքի կատարելագործմանն առնչվող հարցեր: Գնահատվել է ՇԿՀԱ-ի ռազմավարական ծրագրի իրագործման ընթացքը, հաստատվել են կայուն առաջնորդության ձևավորման մոտեցումները և ներկայացվել են համագործակցության ընդլայնման

ուղղությամբ առաջարկներ: Ամփոփվել են ՇԿՀԱ-ի ընթացիկ գործունեության արդյունքները: Ներկայացվել են տարածաշրջանային կենտրոնների հաշվետվությունները, գործընկերային գնահատումների և տեխնիկական փոխանակումների արդյունքները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անվտանգության մակարդակի բարձրացմանը, թվային տեխնոլոգիաների ներդրմանը և կայուն շահագործման ապահովմանը:

Նիստերը անցկացվել են կառուցողական և արդյունավետ մթնոլորտում՝ վերահաստատելով ԱԷԿ օպերատորների գլոբալ գործընկերության և ՇԿՀԱ-ի առաքելության կարևորությունը:

«Ընթացք դեպի կատարելություն» ծրագիրը ՇԿՀԱ-ի անդամների շարունակական համագործակցային գործընթացն է՝ ուղղված անվտանգության, հուսալիության և պատասխանատու շահագործման ոլորտներում գերազանցության հասնելուն: Այս նախաձեռնությունը չի հանդիսանում մեկանգամյա ծրագիր, այլ երկարաժամկետ մոտեցում՝ համագործակցության, փոխադարձ ուսուցման և մասնագիտական աճի համ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել նպատակին հասնելու տեսանկյունից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**